

## Զինվորի պատմածը

Զինվորի մասին խոսելիս ակամա վերադառնում եմ իմ ընտանիք: Տասնյոթ տարի ապրել եմ զինվորականի ընտանիքում: Մեր տունը զինվորական ավանում է, և ես ամեն օր, ամեն պահ հետևել եմ զինվորականի առօրյային: Ինչ խոսք, երբ նայում ես կողքից, ամեն ինչ այնքա՛ն հեշտ է թվում: Ամեն ինչ... նույնիսկ զինվորականի առօրյան...

Զինվորականի տղան զինվոր է ծնվում, և եղբայրս նույնպես հայրենիքի զինվոր դարձավ... Վտանգավոր գոտում էր ծառայում, բայց նրա ապրումների ու կատարած սխրանքների մասին մենք իմացանք քառօրյա ճակատամարտից նրա վերադառնալուց հետո միայն...

Իմ ականջներում ապրիլյան ճակատամարտի հերոս մասնակցի՝ եղբորս պատմածն է.

«Կյանքում կան պահեր, որ տղամարդկային արժանապատվությունդ մահվան սարսափից ուժեղ է...

... Հրամանատարն ասաց, որ տանկերի հարվածից արդեն երկու զոհ ունենք, ո՞վ կգնա լռեցնելու դրանց: Մի պահ վախը սողոսկեց մարմինս, բայց այլընտրանք չկար: «Ես», - ասացի: Հնարավո՞ր էր չասել: Հնարավոր չէր, բայց պարզից էլ պարզ էր, որ տանկի դեմ գնալը մահվան հետ պահմտոցի խաղալ չէ: Թուրքը խփում էր բոլոր զինատեսակներով, արկերը թափվում էին կարկտի պես: Ընկերս ասաց, որ ինքն էլ կգնա: Ու ինքն էլ չէր վախենում մեռնելուց, թեև կյանքը շատ էր սիրում: Նա երեք տանկ խոցեց, իսկ վերջինը ոչնչացնելիս զոհվեց...

Ես ընկերներ եմ կորցրել քառօրյայում, ես կռվել եմ թշնամու դեմ, ու այդ ամենը կարծեզրկվի, իմ կռիվը անիմաստ կդառնա, եթե դու չսիրես քո երկիրը, ի՛մ երկիրը, եթե խռովես քո երկրից ու քո ժողովրդից, եթե թողնես հայրենիքդ ու բռնես արտագաղթի ուղին: Մի՞թե դրան չի ձգտում թշնամին: Ապա ինչու՞ են մեր սահմաններն այդքան լարված, ինչու՞ է սահմանին ամեն օր զինվոր զոհվում: Նրա համար, որ դու մնաս քո երկրում և շենացնես օջախդ, ազգդ, հողդ...»:

Լսում էի զինվոր եղբորս պատմածը ու հպարտանում: Հիմա մի բան ենք ցանկանում բոլորս. տազնապի պահեր չապրի ոչ մի հայ ընտանիք, ոչ մի զինվոր, և ծառայությունից խուսափելու փոխարեն անտրտունջ հայրենիքի զինվորը դառնան բոլոր հայ երիտասարդները ...

*«ԱԼԳ» I կուրսի ուսանողուհի Անուշ Հովսեփյան*